ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անունը, ազգանունը.**
   Արամազդ Ղալամքարյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի նախագահ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ֆիլիպինների Հանրապետություն (Մանիլա) մարտի 15-ից 21-ը

4. **Հրավիրող կողմը.**

   Ասիական զարգացման բանկ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Գործուղման նպատակն էր մասնակցել «Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի պարենային համակարգեր 2026» համաժողովին, որը տեղի է ունեցել 2026 թվականի մարտի 16–19-ը Ֆիլիպինների Հանրապետության Մանիլա քաղաքում, և ուղղված էր Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում պարենային համակարգերի փոխակերպման, կլիմայական դիմակայունության և կայուն զարգացման հարցերի քննարկմանը, ինչպես նաև ծանոթանալ տարածաշրջանում պարենային համակարգերի զարգացման արդի միտումներին և քաղաքականություններին, ներկայացնել Հայաստանի փորձը պարենային անվտանգության և ջրային ռեսուրսների կառավարման ոլորտներում, զարգացնել համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ:

6. **Քննարկված թեմաները.**

Քննարկված հիմնական թեմաները՝

- պարենային համակարգերի փոխակերպում և կայուն զարգացում,
- կլիմայի փոփոխություն և գյուղատնտեսության դիմակայունություն,
- ջրային ռեսուրսների կառավարում և գետավազանային մոտեցումներ,
- պարենային անվտանգություն,
- բնական կապիտալի պահպանում և բնապահպանական լուծումներ,
- գյուղական զարգացման և զբաղվածության խթանում,
- թվային, տվյալահեն և արհեստական բանականության կիրառումներ գյուղատնտեսությունում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Գործուղման շրջանակում առանձնահատուկ կարևորություն է ունեցել Ասիական զարգացման բանկի Գյուղատնտեսության, պարենի, բնության և գյուղական զարգացման (AFNR) ոլորտային գրասենյակի ավագ տնօրեն Քինգֆենգ Ժանգի հետ հանդիպումը, որի ընթացքում քննարկվել են ԱԶԲ-ի կողմից իրականացվող պարենային համակարգերի փոխակերպման ծրագրերը և մինչև 2030 թ. նախատեսվող ֆինանսավորման ընդլայնումը, ինչպես նաև Հայաստանի համար հնարավոր համագործակցության և ներդրումային ծրագրերի հեռանկարները: Կարևորվել են հետագա համագործակցության զարգացումը և փորձի փոխանակումը՝ մասնավորապես պարենային անվտանգության, ջրային ռեսուրսների կառավարման և կայուն գյուղատնտեսության ոլորտներում:

Գործուղման շրջանակում մասնակցություն եմ ապահովել «Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի պարենային համակարգեր 2026» համաժողովի լիագումար նիստերին, թեմատիկ քննարկումներին և տեխնիկական նիստերին:

Մասնավորապես՝

«Rivers Dialogue: Rivers are the Foundations of Food Security, Natural Capital, and Economic Stability» թեմատիկ նիստին՝ ներկայացնելով «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության և համատեղ ջրային կառավարման մարտահրավերները» թեման: Քննարկվել են հետևյալ այնպիսի առանցքային հարցեր, ինչպիսիք են՝ կլիմայի փոփոխության ազդեցությունը պարենային համակարգերի վրա, ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարումը որպես պարենային անվտանգության հիմք, պարենային անվտանգության ապահովման և գյուղական զարգացման համապարփակ մոտեցումները: Կայացել են նաև աշխատանքային հանդիպումներ միջազգային կազմակերպությունների, զարգացման գործընկերների և մասնագիտական շրջանակների ներկայացուցիչների հետ՝ համագործակցության հնարավորությունների քննարկման նպատակով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համաժողովի շրջանակում ընդունվել են հետևյալ հիմնական մոտեցումները և պայմանավորվածությունները.

- Կարևորվել է պարենային համակարգերի փոխակերպման ուղղությամբ տարածաշրջանային և միջազգային համագործակցության խորացումը,

- ԱԶԲ-ն հայտնել է մինչև 2030 թվականը 40 մլրդ ԱՄՆ դոլարի ֆինանսավորման նախաձեռնության մասին, որն ուղղված կլինի պարենային համակարգերի զարգացմանը,
- Ընդգծվել է գետավազանային կառավարման, ջրային ռեսուրսների համատեղ օգտագործման և կայուն կառավարման մեխանիզմների զարգացման անհրաժեշտությունը:

Համաժողովի ընթացքում փաստաթղթի/հուշագրի ստորագրման չեմ մասնակցել:

9. <u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u>

Առանձնահատուկ կարևորվում են Ասիական զարգացման բանկի համագործակցությամբ Ջրային կոմիտեի համակարգման ոլորտում իրականացվող և պլանավորվող ծրագրերը, որոնք ամրագրվել են նաև որպես ԱԶԲ «Սառցադաշտերից ֆերմաներ» (G2F) ծրագրային նախաձեռնության բաղադրիչներ, և իրենց ռազմավարական նշանակությամբ առանցքային տեղ են զբաղեցնում Հայաստանի ջրային, պարենային անվտանգության և կլիմայական դիմակայունության ամրապնդման գործում: Հետևաբար, նպատակահարմար է խորացնել և ինստիտուցիոնալ մակարդակի հասցնել համագործակցությունը Ասիական զարգացման բանկի հետ՝ ապահովելով ոչ միայն ծրագրերի ժամանակին և արդյունավետ իրականացումը, այլև դրանց համաժամանակեցումը և երկարաժամկետ, կայուն արդյունքների ապահովումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար:

10. <u>Ստորագրությունը, ամսաթիվը:</u>

Ա. Ղալամքարյան
25.03.2026թ.